ՅԱԿՈՒԲԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ԿԻՏԱԲ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Յակուբին չարունակում է իր նկարագրած երկրները չորս մասի բաժանելու սկզբունքը, որ դտնում ենք Իբն Խորդադբեհի մոտ, այսինքն Մաշրիկ (Արևելք), Մաղրիբ (Արեմուտք), Ջարբի (Հյուսիս) և Տայան (Հարավ):

[2] Ջարմանայի է Ատրպատականը Արևելք (Մաշրիկ) համարելու պարագան, քանզի արար մասնագիրները միշտ իրանական այս նահանգը համարել են Հյուսիսի (Ջարբ) մի մասը:

[3] Ջափաղանց արժեքավոր է այս տեղեկությունը, ուր պարզ կերպով ասվում է, որ Ատրպատականում ապրել են աղերի պարսիկներ (աջամ, աղարիյա) և իրոք այդ աղդարնակչությունը ոչ միայն իրանական էր, այլև գրեթե պարսիկ: Նույնպիսի իրանական բնակչություն է ունեցել նաև Շարուանը:

[4] Այստեղ թվում է թե ջավիդանները մի ինքնուրույն իրանական ցեղ, կամ ցեղախումբ էին ներկայացնում, որը հավանարար ամրողջովին ընդունեց խուռամյան ուսմունքը և նրա քարոզիչի անունով էլ կոչվեց Ջավիդանիյա:

[5] Այս արտահայտությունը տիրող իրական վիճակն է բացահայտում: Իրոք, խալիֆայության նահանգների տարեկան հարկի քանակը երբեք կայուն չի եղել, ոչ միայն մեկ խալիֆայից մյուսին անցնելու հետևանքով, այլև նույն խալիֆայի օրոք:

[6] Ջարմանայի է այս տեղեկությունը, քանի որ Տիդրոնը, դեռ նույնիսկ Արշակունիների օրոք, մայրաքաղաք է եղել:

[7] Սայման ալ-Ֆարիսին (պարսիկ) ապրել է Արարիայում, մոտիկ է եղել Մուհամմադին և օգնել է նրան:

[8] Հուդայֆա իբն ալ-Յամանը Ասորիքում և Իրաքում արարական արշավանքների մասնակից զորավարներից էր:

[9] Ռումիյան Տիդրոնի քրիստոնեական թաղամասն է, որը կոչվել է Հոռոմների (քրիստոնյա բյուզանդացիների) անունով: Հետագայում ևս Բաղդադում նեստորական կաթողիկոսի նստավայր վանքի (Դայր ալ-Ռում) շուրջը կազմավորված քրիստոնեական թաղամասը կոչվում էր Հոռոմների Տուն բնակավայր (Դար ալ-Ռում):

[10] Հետաքրքրական է, որ այդ գործվածքեղենի տեսակները, որոնք ընդհանուր անունով հայկական (արմանի) են կոչվել գոյություն են ունեցել դեռ Ը-Թ դարերում, որի մասին եղակի տեղեկություն է Յակուբիի վկայությունը: Ինչ վերաբերում է հետագայում՝ Բագրատունյաց ժամանակաշրջանում գոյություն ունեցող այդպիսի արտադրությանը, ապա այդ մասին կան հարուստ վկայություններ Ժ դարի արար աշխարհագրագետների մոտ:

[11] Յակուբիի թե՛ պատմության, թե՛ աշխարհագրության ձեռագրերը պակասավոր են և երկուսն էլ գտնվել են մեկական ձեռագրով: Այստեղ պակասող մասը պետք է վերաբերի հենց Հայաստանին և եթե նկատի ունենանք, որ Յակուբին Հայաստանի մասին յավատեղյակ է, քանի որ այնտեղ ապրել է, ուստի պետք է ենթադրել որ նա շատ մանրամասն և կարևոր տեղեկություններ պետք է հաղորդեր: Նրանից երկու փոքր հատված պահպանվել է Իսպանիայում ապրած արար մատենագիր Շարիշիի (մեռ. 1222) մոտ (Крачковский, т. IV, стр. 306), ինչպես նաև պատմիչ-աշխարհագրագետ Արու-լ-Ֆիդայի (1273-1333) աշխարհագրական երկում, որը և քառակուսի

վակագծերի մեջ դնտնդում ենք, որպես լրացուցիչ նյութ:

[12] Այս տեսլեկությունը, թե Արմինիան երեք մասի էր բաժանվում, մեծ նշանակություն ունեցող վկայություն է, որը մի մեծ թյուրիմացությունից է փրկում Հայասաանի արարական չրջանի մասնագետներին: Գրեթե բոլոր արար աշխարհագրագետներն ու պատմիչները Արմինիան ըստ նախկին ժամանակաչրջանի (Զ-է դարեր) բաժանում են 4 մասի՝ Առան (Ա Հայաստան), Վիրք (Բ Հայաստան), արևելյան Հայաստան (Գ Հայաստան) և արևմտյան Հայաստան (Դ Հայաստան): Այս քառակի բաժանումը արարական չրջանի համար ոչ մի վարչական, կամ ադդային հիմք չունի, իսկ Արմինիա նահանգի եռակի բաժանումը արդեն որոշ չափով ավելի մոտ է իրականությանը, քանի որ Հայաստանը հանդես է դալիս, որպես մեկ միավոր և իրոք նա Արմինիայի կազմում առանձին վարչական ադդային միավոր էր, որը կառավարում էր Հայոց իշխանը (բաթրիկ), իսկ մյուս երկու միավորներից առաջինը ընդգրկում է Հայոց արևելյից կողմանք (Արցախ և Ուտիք նահանգները) և Ադվանքը, Նիրվանը և Դարբանդը: Երրորդ միավորը Վիրքն է (Զուրդան):

[13] Բյուզանդիային վերաբերող այս հատվածով վերջանում է Յակուբիի աշխարհագրական երկում Հյուսիսի (Ջարը) մասին հատվածը: Հեղինակը հիշում է, որ իր մյուս գրքում («Պատմությունն») նա հիշել է Սահմանային ամրությունների (Սուդուր) մասին: Արու-լ-Ֆիդայի մոտ փոխվում է հաջորդականությունը: Հիշվում է Հայաստանը, ապա Վիրքը, որին թյուրիմացաբար միացվում է Դարբանդը: Միավորում է նաև Այանաց երկիրը, երրորդ տեղում հիշվում է Առանը, որին դարձյալ միացվում է Դարբանդը:

Ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի